**Ասպիրանտուրայի ընդունելության գիտական ռեֆերատի նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները**

Գիտական ռեֆերատը պետք է բաղկացած լինի առավելապես վերլուծական բաղադրիչից: Լինի ամբողջական, ինքնուրույն, ավարտուն հետազոտություն՝ միմյանց տարմաբանական շարվածքով՝ փաստելով դիմորդի մասնագիտական պատրաստվածության և ինքնուրույն հետազոտություն իրականացնելու կարողության մասին:

Ռեֆերատը պետք է շարադրված լինի տպագիր: Աշխատանքի ծավալը պետք է լինի նվազագույնը **20** էջ:

Դիմորդի կողմից փաստաթղթերի ներկայացման ժամանակ տրամադրել ռեֆերատի տպագիր տարբերակը, որից հետո aspirantura@asue.am կամ aspirantura.phd@outlook.com էլ. հասցեին ուղարկել նաև համակարգչային շարվածքի էլեկտրոնային (PDF ֆորմատով) տարբերակը:

Գիտական ռեֆերատի կառուցվածքի հիմնական տարրերն են՝

- **Տիտղոսաթերթ,**
- **Համառոտագիր (abstract):** Համառոտագիրն աշխատանքի ընդհանրական ամփոփումն է, որն ի մի է բերում իրականացված հետազոտությունը և շաղկապում դրա առանձին բաժինները: Այն ներկայացնում է հետազոտության հիմնական բովանդակությունը և ստացված արդյունքները: Համառոտագիրը պետք է գրել հակիրճ, սակայն բովանդակալի ու միմյանց տրամաբանական շարունակությունը հանդիսացող հստակ ձևակերպումներով: Համառոտագրում չօգտագործել աղյուսակներ և գծապատկերներ, խուսափել հղումներից: Բառերի քանակը պետք է լինի միջինը 150-200 բառ:
- **Ներածություն:** Այս բաժնում հիմնավորել հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, ազդեցության շրջանակը,

լուծման ուղիների և մեթոդների կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև ակնկալվող արդյունքը, վարկածների առաջադրումն ու դրանց ստուգման ուղիների հակիրճ և հստակ նկարագրումը: Ներածությունը պետք է արտահայտի թեմայի կիրառական նշանակությունը՝ ունենալով մեթոդաբանական և տեսական ամուր հենք: Ներածությունն ամփոփել եզրակացությամբ (նվազագույնը 3 էջ):

- **Գրականության ակնարկ (Literature review):** Գրականության ակնարկը հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրությունն է և հանդիսանում է հետազոտության շրջանակներում արծարծված խնդիրների լուծման ուղղությամբ այլ հետազոտողների կողմից մինչ այդ իրականացված վերլուծությունների ընդհանրացում (հետազոտություններ, հոդվածներ, հրապարակումներ, թեզեր, մենագրություններ և այլն):
- **Հետազոտության մեթոդաբանություն** բաժնում համառոտ կերպով նկարագրվում են ինչպես հետազոտության իրականացման գիտականորեն հիմնավորված և լայն կիրառություն ունեցող, այնպես էլ հեղինակի կողմից առաջարկված սեփական մեթոդաբանությունը, եթե այդպիսին առկա է:
- **Վերլուծություն և արդյունքներ (Analysis and Findings)** բաժնում ներկայացվում են հետազոտության ընթացքում ստացված կիրառական կամ տեսական բնույթի տվյալները: Համապարփակ վերլուծությանը հաջորդում է իրականացված հետազոտության արդյունքների ու բացահայտումների նկարագրումը: Ցանկալի է ստացված արդյունքների ներկայացումը գծապատկերների, աղյուսակների, գրաֆիկների և սխեմաների կիրառմամբ:
- **Եզրակացություն**, որտեղ շեշտադրվում է ներածությունում նշված խնդիրների լուծման հեղինակային տեսլականը: Խորհուրդ է տրվում կրկին անդրադառնալ հետազոտության իրականացման նպատակին, արդիականությանը, առաջադրված խնդրին և վարկածներին՝ ստացված արդյունքի հետ դրանք համադրելու նպատակով: Եզրակացության մեջ պետք է համառոտ և հստակ

ամփոփել հետազոտական աշխատանքի բացահայտումները, որոնք մինչ հետազոտության իրականացումն անհասանելի էին ընթերցողների համար, ինչպես նաև ներկայացնել, թե հետազոտության արդյունքները որքանով են լրացնում առկա գրականության բացթողումները և այլ հարակից ինչպիսի խնդիրների կարող են լուծում տալ: Եզրակացության մեջ ընդգծվում է հետազոտության խնդրի հաստատումը կամ հերքումը, քննարկվում արդյունքի նշանակալիությունը, ցույց տրվում, որ հետազոտողը պատասխանել է իրեն առաջադրված հարցերին և ստուգել իր կողմից առաջ քաշված վարկածները:

- **Գրականութան ցանկ**. դրանք տալ ինչպես հղումներում, այնպես էլ վերջում՝ ցանկով և ամբողջական ելակետային տվյալներով (նվազագույնը 15 անուն):

<u>Տեխնիկական պահանջներ</u>.

A4 ֆորմատի թղթի համակարգչային շարվածքով հայերեն շարադրանք (վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2.5 սմ, ձախից 3 սմ, աջից 1.5 սմ, տառատեսակ – Armenian Unicode /GHEA Grapalat/, տառաչափ 12, միջտողային տարածությունը 1.5 սմ)